

Հարածունն Եկեղեցւոյ : Մեծն Կոստանդիանոս . Ժողով Նիկիոյ ընդ-
դէմ Արիոսի : Գլխոյն Հեղինէ մայր Կոստանդիանոսի . Շինութիւն
Տնօրինական Ս . Տեղեաց յԵրուսաղէմ :

Ի ՓՈՓՈՅԻՒԼ Կայսերացն Հռոմայ , փոփոխումն առ-
նոյր եւ վիճակ եկեղեցւոյ . մերթ վտարանդի 'ի հալած-
մունս եւ մերթ յանդորր 'ի խաղաղութեան : Այլ իբրեւ
ամբարձան 'ի դահ Կայսերութեան Դիոկղիտիանոս եւ
Մաքսիմիանոս , առաջնոյն առեալ զարեւելս եւ երկրորդին
թողեալ զարեւմուտս , սկիզբն եղեւ տակաւ արծարծել
հրդեհի հալածման քրիստոնէից եւ առաւել եւս բորբո-
քեցաւ 'ի սաղրելոյ դազանաբարոյ դահակցի նորին Դիոկ-
ղիտիանու Գաղերիայ (292) : Յառաջին 18 ամսն Դիոկղի-
տիանու էր եկեղեցին 'ի մեծի յաջողութեան , և յամենայն
քաղաքս տէրութեանն կային քրիստոնէայք և եկեղեցիք ,
եպիսկոպոսունք էին մեծարոյ առաջի գործակալաց տէ-
րութեանն , եւ կայսրն իսկ ակն ածէր 'ի քրիստոնէու-
թենէ : Սակայն երեւէր եւ փառասիրութիւն , հեռ և նա-
խանձ 'ի մէջ քրիստոնէից և նոցին հովուաց , որովք ար-
ժանի իսկ էին խրատելոյ յԱստուծոյ հալածանօք , որպէս
ասէ Եւսեբի :

Դիոկղիտիանոս զառաջինն միայն զՄանիքեցիսն հալա-
ծէր իբրեւ աղանդ ինչ պարսկային մտեալ 'ի սահմանս
Հռովմայեցւոց , առեալ հրովարտակ զգլխաւորս նոցա
այրել հանդերձ դրովք նոցին , եւ զմնացեալսն սպա-
նանել : Սակայն Գաղերիոս ատեցող քրիստոնէութեան՝
չրջեաց զմիտս Դիոկղիտիանու և վճռով սահմանեցաւ առ
հասարակ հալածումն Եկեղեցւոյ : Ի սմին ժամանակի ա-
նունն անգամ Երուսաղէմի այնպէս մոռացեալ էր , մինչեւ
ոմն 'ի վկայից պատասխանել ումեմն Կառափարչի Հռով-
մայեցւոց՝ եթէ իցէ ինքն յԵրուսաղէմէ , կարծեաց նա թէ
բանք վկային են զքաղաքէ միովք դաղան կառուցելոյ՝ ի քրիս-
տոնէից (303) : Ելին այլ և այլ հրովարտակք , և տեւեաց